ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9.1-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ սույն մասի 9.2-9.5-րդ կետերով նախատեսված դեպքերի՝ գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից:

Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, միաժամանակ վերջինիս օգտին բավարարված հայցապահանջ առկա չէ, պետական տուրքից զատ այլ դատական ծախսեր չկան, ուստի Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Տեխնո Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/53 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի (հանրակրթություն) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 5-րդ, 6-րդ, 8-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ չափաբաժինների համար «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**

Վճիռը «___» «_____» 2023 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**